

մի կին կամ մի աղջիկ առնել. բայց թէ ինչո՞ւ «хлюбо-чато-бужная материя»-ին դուրս է ձգել, քանի որ այդ նախադասու-թիւնը նեղրենբրի լուսաւորութեան ճանապարհի վրայ մի քա-նի աստիճան, յառաջադիմելու է ցոյց տալիս. այդ պ. Բաբայ-եանին է յայտնի: Ֆրանսիացիք շափազանց լուսաւորուած էին համարում իրանց, երբ կարողացան իրանց թագուհիներին մէ-կի ժամանակ առաջին անգամը բամբակից մի շալիկ գործել:

Իսկ ինչ կը վերաբերի Ասիայի մասին իմ վերցրած օրինակի համար Եանչինը ասելի է իր դասագրքի երես 43-րդում (Բաբայեանում 59). «Армяне, населяющие плоскогорье, большею частью земледѣльцы или пастухи: всѣ—христиане». Ի՞նչ զարմանալու բան կայ որ Եանչինը Հայաստանի և հայերի համար երկու տող է նուիրել, և պ. Բաբայեանն էլ նրան է հետեւել. չէ՞ որ նրա հայրենակիցներից մէկը, դժողք դարձրած երկրի համար ասել էր. «je veux voir l' Arménie sans des ar- ménien».—

Այսքան օրինակներից յետոյ, ընթերցող հասարակութեանն ենք թողնում դատելու, թէ որքան իրաւացի է պ. Բաբայեանի վարժունքը ուրիշի աշխատութիւնը թարգմանել և իր 'անունը խոշոր դառերով դրոշմել վրան իբրև կազմող....

Ծ. Այվազեանց

ՆՈՐ ՄՏԱՑԱԾ ԳՐԳԵՐ

- 1) Армянская Муза, Сборникъ, изданный подъ редакціей Ю- рія Веселовскаго и проф. Г. А. Халатянца со вступитель- ной статьей «Нѣсколько словъ о новой Армянской поэзіи», Москва—1906. Цѣна 1 руб.
- 2) Մադաթ Պիտրոսեան, «Պատմութեան», Թիֆլիզ, 1906, գինն է 30 կ.
- 3) Հ. Վերնից, Երեւայի կրթութիւնը մինչև 6—տարեկան հա- սակումը, թարգմ. լեհ Ստ. Լիս., 1906, գ. 25 կ.
- 4) Ю. Веселовикій, Очерки Армянской литературы и жизни 1906, Армавиръ, ц. 70 к.
- 5) Ազիանի, Նաբուած Յոյսեր, կոմեդիա 2 արար. վրաց. փոխ. Մարտո, Բոստով Դոնի վրայ, 1906, գ. 15 կ. հրատ. «Դէպի Լոյս»:
- 6) Պետրովիչ, Պրոլետարներ բոլոր երկրների միացէ՛ք: Թարգմ. Ադին, 1906, գ. 5 կ.
- 7) Ս. Զաւարեան, ծրագիր և նախագիծ գիւղացի ազգաբնա- կութեան տնտեսական վիճակի ուսումնասիրութեան:
- 8) Վ. Գոլուբով, Ի՞նչ է Ժողովրդապետութիւնը, ռուս. թարգմ. Լ. Ղ., 1906, Թիֆլիս, գ. 2 կ.